ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

«09» հեկտեմբեր 2022թ"

HETQ.am-ի լրագրող Տիրայր Մուրադյանին

Հարգելի Տիրայր Մուրադյան,

Ի պատասխան Ձեր՝ Երևանի քաղաքապետի 13.12.2013 թվականի թիվ 6379-Ա որոշման վերաբերյալ հարցադրումների, հարկ եմ համարում տեղեկացնել, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքապետն իր գործունեությունը կազմակերպում է քաղաքապետի տեղակալի (տեղակալների), վարչական շրջանների ղեկավարների, քաղաքապետի խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի միջոցով:

Վերը նշվածից բխում է, որ Երևանի քաղաքապետը իր գործառույթները չի իրականացնում անձամբ, այլ դրանք իրականացվում են համապատասխան մասնագետների կողմից, ովքեր կրում են պատասխանատվություն դրանց իրավաչափության համար և Երևանի քաղաքապետի կողմից իրավասու պաշտոնատար անձ հանդիսացող մասնագետների կողմից ներկայացված որոշումների նախագծերի լրացուցիչ ուսումնասիրություններ չեն իրականացվում:

Ինչ վերաբերում է ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացին, ապա հարկ է նշել, որ քննարկվող որոշման կայացման պահին գործող խմբագրությամբ ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի կարգավորումների համաձայն՝ հողամասի սեփականատերը դիմումի հետ միասին պետք է ներկայացնի լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով տրված սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը՝ ինքնակամ կառույցների համապատասխան նշումներով, իսկ համապատասխան նշումները չլինելու դեպքում՝ ներկայացնում է նաև համապատասխանաբար ինքնակամ կառույցների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հրամանով հաստատված ձևի հատակագիծը (հատակագծերը):

Վերը նշվածից բխում է, որ ինքնակամ շինության օրինականցման դեպքում ինքնակամ կառույցների վերաբերյալ տեղեկատվությունը (մակերես, ուրվագիծ, հարկայնություն և այլն) ներկայացվում է դիմողի կողմից՝ կամ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի կամ հատակագծի տեսքով: Հարկ է նշել, որ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը տրվում է իրավասու պետական մարմնի կողմից, իսկ

հատակագիծը կազմվում է համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից և երկու դեպքում այդ փաստաթղթերում նշված տեղեկատվության համար պատասխանատվություն են կրում դրանք կազմած մարմինները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Վերը նշվածից բխում է, որ Երևանի քաղաքապետարանի իրավասու պաշտոնատար անձինք իրավասու չեն կասկածի տակ դնելու անձի ներկայացրած տվյալները՝ քննարկվող դեպքում՝ իրավասու պետական մարմնի կողմից տրված վկայականի կամ որակավորում ունեցող կազմակերպության կողմից կազմված հատակագծի իրավաչափությունը:

Հարկ է հավելել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար:

Ինչ վերաբերում է Երևանի քաղաքապետի 13.12.2013 թվականի թիվ 6379-Ա որոշման իրավաչափությանը կամ դրա հիմքում դրված տեղեկատվության կեղծ լինելուն, ապա դրա վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ստանալու համար առաջարկում եմ դիմել Երևանի քաղաքապետարան, քանի որ Երևանի քաղաքապետի որոշումները և դրանց կայացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի պատճենները գտնվում են Երևանի քաղաքապետարանում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀՀ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ